

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ 33.
ԵՐԵՎԱՆԻ 33-ՐԴ (ՖԻՐԴՈՒՍ)
ԹԱՂԱՄԱՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ**



**ALTERNATIVE 33:
AN IDEA COMPETITION
FOR THE URBAN REVITALIZATION
OF THE DISTRICT 33 (FIRDUSI)**

Մրցույթի կազմակերպիչ

Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտե



Competition organizer:

The Committee for the Protection of Yerevan's Heritage

ԷԼ. փոստ | E-mail: alt33@urbanlab.am

Google Maps <https://bit.ly/3j1Lx4w>

Գործընկերներ \ Partners

urbanlab ■



FOCUS



archi_walkie

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|-----------|---------------------------------------|
| 8 | Նախաբան |
| 13 | Պատմական ակնարկ |
| 21 | Ֆիրդուս թաղամասի ձեւավորման շրջանները |
| 27 | Առաջադրանքի հիմնական դրույթները |
| 34 | Ելակետային տվյալներ |
| 36 | Առաջարկին ներկայացվող պահանջներ |
| 39 | Մասնակցություն |
| 40 | Հրապարակայնացում |
| 41 | Կանոններ |
| 42 | Ժյուրի |
| 43 | Մրցանակ |
| 44 | Ժամկետներ |
| 45 | Կապ |
| 46 | Օգտակար հղումներ |

\

CONTENT

| | |
|-----------|------------------------------------|
| 8 | Preface |
| 13 | Historical overview |
| 21 | Firdusi district formation periods |
| 27 | Main provisions for the proposal |
| 34 | Provided materials |
| 36 | Application requirements |
| 39 | Eligibility |
| 40 | Publicity |
| 41 | Rules and regulations |
| 42 | Jury |
| 43 | Awards |
| 44 | Dates |
| 45 | Contact |
| 46 | Useful links |



33-րդ թաղամաս, 2020 \ District 33, 2020

Թիվ 33 կամ հանրության շրջանում հայտնի՝ Ֆիրդուսի թաղամասը (այսուհետ՝ Թաղամաս) Երևանում եզակիորեն պահպանված պատմական թաղամասերից է, որը գտնվում է քաղաքի կենտրոնում՝ Հանրապետության հրապարակի հարևանությամբ: Հրապարակը ձևավորվել է որպես խորհրդային քաղաքաշինական մտքի խորհրդանիշ, խորհրդային և հետխորհրդային իշխանությունների (Նախկինում՝ Լենինի արձանը, այսօր՝ կառավարական շենքերը), մշակութային ժառանգության (Հայաստանի պատմության թանգարան և Ազգային պատկերասրահ) ներկայացուցչական վայր: Այս միջավայրին հակադրվելով պահպանվել է մի թաղամաս՝ Ֆիրդուսը, որը ձևավորվել է 18-րդ դարի վերջերին և կառուցապատվել մինչև 21 դարի սկիզբը:

Ֆիրդուսի փողոցն ու Թաղամասը Նախորդող ժամանակաշրջանների քաղաքային տարածքի յուրօրինակ հուշ են: Սա այն սակավաթիվ փողոցներից է, որը մի քանի դար ոչ միայն չի փոխել իր անվանումը և չեն ենթարկվել արմատական փոփոխությունների (թե՛ քաղաքային զարգացման, թե՛ սոցիալ-մշակութային), այլև շարունակել են գոյատևել իբրև թաղամաս, որտեղ մարդիկ են ապրում: Ֆիրդուսը հակադրվում է քաղաքի կենտրոնական հատվածին և դառնում այլընտրանքային տարածք, որտեղ գերիշխում են ինքնաբուխ ճարտարապետությունը՝ մեկ կամ երկու հարկանի տները, բերքատու ծառերով լի այգիներն ու առևտրային տաղավարները:

District 33, better known to the public as “Firdusi”, (hereinafter referred to as “The District”) is one of the last surviving historical districts of Yerevan, which is located in the city center, next to the Republic Square. The square was formed as a paradigmatic symbol of Soviet urban development, and as a representative site for Soviet and post-Soviet power (formerly Lenin statue and currently Government buildings) and cultural heritage (History Museum and National Gallery). Standing in contrast to this environment, a district –i. e. Firdusi – was preserved next to it, which was formed in the late-18th century, and developed till the early 21th century.

Firdusi street and the District are unique traces of the city space from previous periods. This is one of the few streets in Yerevan that not only hasn't changed its name over the centuries, or undergone radical transformations (both in urban development and sociol-cultural terms), but also remains a district, where people live their lives according to customs and traditions developed over many generations. The District contrasts with the city centre and becomes an alternative zone, where spontaneous architecture, one-or two-storey houses and orchards prevail.

Թաղամասի ներսում գերակշռում է ինքնաբուխ կառուցապատումն ու եռում է կյանքը, իսկ ամբողջ պարագծով Թաղամասը շրջապատված է ճարտարապետական ներկայացուցչական մշակութային հուշարձաններով, որոնք թվագրվում են սկսած 19-րդ դարից մինչև մեր օրեր:


1990-ականներից ամբողջ փողոցը վերածվեց «արևելյան շուկայի», որը հետագայում ծածկեց գրեթե ամբողջ Թաղամասը, և «Ֆիրդուս» հավաքական անվանումը սկսեց վերագրվել նաև հարակից փողոցներին: Թաղամասի և բնակիչների ինքնությունը երկու հարյուրամյակների ընթացքում ենթարկվել են տարբեր փոխակերպումների, որոնցից երկուսը շրջադարձային են՝ 1915-1920-ականներին ձևավորված միջէթնիկ միջավայրը և 1990-ականներին ձևավորված շուկան: «Արևելյան շուկան», միջէթնիկ համայնքի մասին հիշողությունը, իրանցի միջնադարյան պոետի անունով փողոցը ստեղծում են արևելյան քաղաքի յուրահատուկ երանգավորում, որը Երևանի այլ հատվածներում ջնջվում էր խորհրդային տարիներին և շարունակում է ջնջվել հետխորհրդային ժամանակաշրջանում:

2008 թվականից հետո սկսվում է Թաղամասի տարածքի օտարման գործընթացը, և հյուսիսարևմտյան ու արևելյան հատվածներում տեղակայված տների մի մասը քանդվում է կառուցապատողների կողմից: Դրան նախորդած շրջանում էլ, ինչպես և Երևանի պատմական տարբեր թաղամասերում (Հյուսիսային, Գլխավոր պողոտաներ և այլ տարածքներ) բնակիչներն ապրել են «պլանի տակ» գտնվող տներում, այսինքն՝ պլանավորված էր քանդել դրանք և տեղում կամ այլ վայրում պետության կողմից նոր բնակարան հատկացնել: Այս սպասումներն ամբողջովին լքվածության քողով են պատել Երևանի պատմության շերտերը:

All these elements oppose the formal, mainly Soviet architecture, which the District is surrounded by. Spontaneous construction and life prevail inside the District, while along the perimeter, it is surrounded by representative examples of architectural monuments dating from the 19th century to the early 1930s.

Since the 1990s, the whole street has changed into an “Oriental” market, which later covered almost the entire District and the collective moniker “Firdusi” was ascribed to the neighboring streets as well. The identity of the District and of its residents has undergone different transformations during the past two centuries, two of which were decisive: the multi-ethnic environment formed between 1915-1920s and the market being formed in the 1990s. The ‘Oriental’ market, the memory of the multicultural community, the street named after the Iranian medieval poet – all of this creates a unique aura of an eastern city, which was being erased from the other parts of Yerevan during the Soviet period, and also continues in the post-Soviet era.

In 2008 began the partitioning processes of the District’s territory, and some of the houses located in the north-western and eastern parts were demolished by developers. During the preceding period, just as in other historic districts of Yerevan (North and Main Avenues and other territories), residents lived in houses “under the plan”, which meant that such houses were slated for demolition, to be recompensed by new housing form the state on the same site or other territories. These expectations completely enveloped the pre-Soviet layers of Yerevan’s history with a veil of abandonment.



Թիվ 33 թաղամասի գոյություն ունեցող հյուսվածքը համադրված նախագծային առաջարկի հետ

Existing urban texture of District 33 (Firdusi)
 overlapped with draft proposal




Հյուսիսային պողոտայի գոյություն ունեցող հյուսվածքը համադրված նախագծային առաջարկի հետ

Existing urban texture of Northern Avenue
 overlapped with draft proposal



Արտգոյ հյուսվածքը համադրված

սե



Հյուսիսային պողոտան կառուցված, 2019

Northern Avenue as built, 2019

2015 թվականին առաջարկվում է ամբողջովին քանդել Թաղամասի պատմական շինություններն ու տարածքը կառուցապատել բոլորովին այլ տրամաբանությամբ: Միայն 2020 թվականին են առավել ակտիվանում Թաղամասի կառուցապատման շուրջ քննարկումները, իսկ նույն թվականի հունիս ամսին Թաղամասում քանդվում է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թվագրվող պատմական մի շինություն: Մի խումբ քաղաքացիներ և մասնագետներ բարձրաձայնում են այս մոտեցման անթույլատրելիության մասին: Թաղամասում դեռևս մնացած բնակիչների հետ համատեղ ուժերով սկսվում են այս խնդրի վերաբերյալ գործընթացներ, որոնք չնայած ազդում են հանրային կարծիքի վրա, սակայն դեռևս էական ազդեցություն չեն ունեցել նախագծի վերանայման ու պատմական թաղամասի արժևորման գործընթացների վրա:

Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտեն՝ նախաձեռնելով այս մրցույթը, ցանկանում է գտնել լավագույն այլընտրանքային լուծումները Թաղամասի քաղաքային միջավայրի վերակենդանացման համար:

Այս նախաձեռնությունը հատկապես նպատակ ունի ազդելու քաղաքային իշխանությունների վերջնական որոշման վրա, քանի դեռ վերջնական հաստատման չի արժանացել ներկայացված նախագիծը: Ուստի քաղաքային միջավայրի վերակենդանացման հայեցակարգային առաջարկների մրցույթի նպատակն է՝ բաց և մրցակցային գործընթացներով քաղաքային պլանավորման (քաղաքաշինական) մակարդակում բացահայտել տնտեսական, սոցիալական և բնապահպանական առումով իրագործելի և կայուն լուծումներ, որոնք կհենվեն պատմականորեն ձևավորված քաղաքային միջավայրի պահպանության և վերարժևորման սկզբունքի վրա:

It was proposed in 2015 to completely demolish the District’s historical buildings and build–up the area with an entirely different approach. It was only in 2020 that discussions around this reconstruction project intensified, especially after a late-19th, early-20th century historical building was demolished that same year in June. A group of citizens and specialists raised the issue of inadmissibility of this approach. Processes pertaining to this issue were instigated with the joint efforts of the remaining residents, which, despite having some impact on public opinion, have not had a significant effect on the processes of project’s reconsideration or the reevaluation of the historical district itself.

By initiating this competition, the Committee for the Protection of Yerevan’s Heritage, aims to find the best alternative solution for the revitalization of the urban environment of the District.

This initiative especially aims to affect the final decision of the city authorities, since the project submitted has not yet received final approval. Therefore, the purpose of the conceptual proposals regarding the revitalization of the urban environment is: to point out economically, socially and environmentally feasible, and sustainable solutions through open and competitive processes at the urban development level, which will be based on the principle of conservation and re-evaluation of the historically-formed urban environment.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սերգո Տոնոյան

ճարտարապետ, պատմաբան

Յուրաքանչյուր քաղաք իր պատմական զարգացման տարեգրության մեջ անխուսափելիորեն բախվում է ճակատագրական տարեթվերի, որոնցից այս կամ այն կողմում տեղավորված իրադարձությունների շարադրանքը բոլորովին այլ կերպար և բովանդակություն է ստանում:

Բնականաբար, խոսքը ոչ թե քաղաքների հիմնադրման տարեթվերի, այլ գոյություն ունեցող պատմական զարգացման ընթացքը ամբողջովին նոր ժամանակափուլ տեղափոխող հանգրվանի մասին է: Այդպիսիք կարող են համարվել, օրինակ՝ Լոնդոնի 1666 թվականի մեծ հրդեհը (Great Fire of London), որը բրիտանական մայրաքաղաքի հիմնովին վերակառուցման և ինդուստրացման պատճառ դարձավ, կամ նույնօրինակ փոփոխությունների՝ Փարիզի օրինակը, որն էլ կարող ենք կապել բարոն Ժորժ Էժեն Հոսմանի՝ 1853 թվականին Սենի վարչակազմի պրեֆեկտ նշանակվելու փաստի հետ:

Ժամանակակից Երևանի՝ դեպի հազարամյակների խորքը տանող պատմության ներկայիս տեսանելի անցյալը վավերագրելու համար մենք կանգ ենք առնում այդպիսի երկու ճակատագրական տարեթվերի վրա, որոնցից առաջինը 1679 թվականի Մեծ երկրաշարժն է, իսկ երկրորդը վերաբերում է Հայաստանի խորհրդայնացմանն անմիջապես հաջորդած՝ 1924 թվականին, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի մշակած Երևանի վերակառուցման գլխավոր հատակագծի հաստատման տարեթվին:

HISTORICAL OVERVIEW

Sergo Tonoyan

Architect, Historian

In the chronicle of its historical development, each city inevitably encounters fatal dates and the interpretations of the events on either side of the latter, assume entirely different formulations and meanings.

Of course, we are not talking about dates of the foundations of cities, but rather about the endpoints that shift the continuum of existing historical developments into a completely new era. In this respect we can recall, for instance, the Great Fire of London in 1666, which compelled the fundamental reconstruction and industrialization of the British capital, or the example of Paris, with its similar transformation that is linked to the appointment Baron Georges-Eugene Haussmann as the Seine department prefect in 1853.

For the purpose of certifying - from the perspective of modern Yerevan - the currently visible segment of a past, which goes back into millennial history, we encounter two such fatal dates: the first is the 1679 Great Earthquake and the second relates to the approval date of the general plan of Yerevan's reconstruction developed by architect Alexander Tamanyan in 1924, soon after Armenia's Sovietization.



Հուշարձան շենքի քանդումը
Հյուսիսային պողոտայի կառուցման ընթացքում,
2004 թվական, լուսանկարը Հայկ Բիանջյանի \

Historic building being demolished for construction
of Northern Avenue, 2004, photo by Hayk Bianjyan

Լոնդոնի և Փարիզի վերոնշված օրինակների նման, Երևանի պատմության առանցքային այս երկու իրադարձություններն էլ, մի դեպքում առնչվում են բնական աղետի հետ, որը փաստացի երկրի երեսից պարզապես ջնջեց վաղ միջնադարից գոյություն ունեցող քաղաքը, իսկ մյուսը վերաբերում է հասարակարգային և պատմաքաղաքական փոփոխությունների ֆոնին, քաղաքի վերակառուցման և արդիականացման գործընթացին:

Երևանի ներկայիս քաղաքային միջավայրի ցանկացած հանգույց կամ թաղամաս իր պատմական վերափոխման մեզ հայտնի ողիսականն անցկացրել է ահա այս երկու տարեթվերի միջև գոյացած շուրջ երկուսուկես հարյուրամյակի թոհուրոհում և մեզ է հասել՝ վերապրելով, բնականաբար, վերջին հարյուրամյակի քաղաքաշինական զարգացումները:

Կարևոր այս տարեթվերի միջակայքն իր հերթին հստակ արտահայտում է Երևանի պատմաքաղաքական կյանքի շրջափուլերը, որոնք համապատասխանաբար իրար հաջորդող պարսկական և ցարական Ռուսաստանի ազդեցության շրջաններից անցում են կատարում դեպի 20-րդ դարի 20-ականները՝ Հայաստանի խորհրդայնացումը, և ձգվում մինչ մեր օրեր: Այստեղ են հատվում նաև «հին» և «նոր» Երևան եզրույթները, որոնք կոչված են նկարագրելու յուրաքանչյուր ժամանակաշրջանի քաղաքային պլանավորման և ճարտարապետական ոճերի միջոցով ձևավորված քաղաքային միջավայրի առանձնահատկությունները:

Similar to the aforementioned examples of London and Paris, these two key events in Yerevan's history, also pertain to a natural disaster in one instance – which simply wiped-out the existing city that was formed since the early Middle Ages – and, relate to the city's reconstructive and modernization processes against the background of wider socio-political and historical changes.

Any junction or district of Yerevan's current urban environment has undergone its known odyssey of historical transformation within the turmoil of the almost two and a half centuries that lie between these two dates, and has reached us by surviving, of course, the urban planning developments of the last century.

The stretch between these important dates clearly expresses, in its turn, the various cycles of Yerevan's historical-political life, which move from successive periods of Persian and Tsarist Russian occupation to the Sovietization of Armenia in the 1920s, and till our days. It is also here that the notions of 'old' and 'new' Yerevan intersect, which invoke the peculiarities of an urban environment developed through the amalgamation of the urban planning paradigms and stylistic characteristics of each period.

Ֆիրդուսը՝ Երևանի պատմական զարգացման փուլերի խաչմերուկներում

Գտնվելով Երևանի գլխավոր՝
Հանրապետության հրապարակի
անմիջական հարևանությամբ,
պատմության և մշակույթի շերտերի
ինքնատիպ խաչմերուկում է թաքնված
Թաղամասը: Պարփակված լինելով
Թաղամասը շրջապատող փողոցների
երկայնքով կառուցված նախորդ երկու՝
19-րդ և 20-րդ դարերի գծային
կառուցապատումով, այն իր ներսում
պատասպարել է ավելի հին՝ 18-19-րդ
դարերին բնորոշ քաղաքային
հյուսվածքներով ձևավորված իր
կոլորիտային միջավայրը:

Մինչև հիմա էլ Ֆիրդուսում շատ հստակ
պարզորոշվում է թաղամասը ձևավորող
կորագծային փողոցային ցանցն ու դրա
շուրջը կուտակված այգիներով հարուստ
շենքերը: Այսպիսի քաղաքային
հյուսվածքներով թաղամասերից
Ֆիրդուսին միակն է քաղաքի
կենտրոնական, հարթավայրային մասում,
որ պահպանված է մեկ ամբողջության մեջ:
Ի տարբերություն նմանօրինակ մյուս
թաղամասերի՝ Կոնդի, Հին Նորքի,
Քանաքեռի, Սարի թաղի, որոնք մեծ ու
փոքր բարձրունքներով շղթայում են
Երևանը արևմուտքից՝ հյուսիս, և դեպի
արևելք, Ֆիրդուսին իր «նախորդի»
Հյուսիսային պողոտայի տեղում գտնվող
հին թաղամասի նման, կարծես՝ միայնակ և
անպաշտպան է մնացել բաց դաշտում
քաղաքը կլանող «գերակա շահի» դեմ
պատերազմում:

Ինչպես Հյուսիսային պողոտայում ¹, որտեղ
հին թաղամասի միջով իր առնվազն
երեքդարյա ճանապարհն էր հարթել
ներկայիս

¹Հյուսիսային պողոտայի վերաբերյալ ավելի
մանրամասն տես՝ Contrivances on Araratian Street:
An Ideology or An Urban Public Space, by S. Petrosyan,
N. Topalian, [www.academia.edu/19954659/
Contrivances_on_Araratian_Street_An_Ideology_
or_An_Urban_Public_Space](http://www.academia.edu/19954659/Contrivances_on_Araratian_Street_An_Ideology_or_An_Urban_Public_Space)

Firdusi at the Crossroads of Yerevan's Historical Development Stages

Being directly adjacent to the Republic
Square, the District is hidden in a unique
crossroads of historical and cultural
layers. Enclosed by the late-19th and
20th century buildings constructed
along the streets surrounding the Dis-
trict, it has embalmed the colorful envi-
ronment formed by the urban textures
peculiar to the earlier settlement peri-
ods in the 18th and 19th centuries.

Even now, this district-forming modality
of snaking street-networks and the
garden-bound building blocks formed
around it, are easily identified in Firdusi.
Firdusi is the only one of the districts in
Yerevan's central, low-land part with
such urban textures preserved in its
entirety. In contrast to other such
districts - Kond, Old Nork, Kanaker, Sari
Tagh - which encircle Yerevan with big
and small hills from west to north and to
east, Firdusi, much like its 'predecessor'
– the old district on the site of the
Northern avenue – seems left alone and
helpless in an open field, in a battle
against the policy of 'Priority interest'
that is consuming the city.

Just as in the Northern Avenue ¹ – where
the current Hin Yerenatsi (former
Lalayants) Street had paved its way
through the old district during almost
three centuries,

¹For more details about Northern Avenue, please see:
contrivances on Araratian Street:
An Ideology or An Urban Public Space, by S. Petrosyan,
N. Topalian, [www.academia.edu/19954659/Contrivances_on_
Araratian_Street_An_Ideology_or_An_Urban_Public_Space](http://www.academia.edu/19954659/Contrivances_on_Araratian_Street_An_Ideology_or_An_Urban_Public_Space)

Հին Երևանցի (Նախկին Լալայանց) փողոցը, և որն ամբողջությամբ աղճատվեց նոր կառուցապատման հետևանքով՝ պահպանելով միայն, արդեն ոչինչ չասող անունը, այդպես էլ Ֆիրդուսում է վտանգված թաղամասը կազմավորող գլխավոր և առանցքային Ֆիրդուսի փողոցը: Վերջինիս առկայությունն ու մանր երակների նման ճյուղավորումները 18-19-րդ դարերի քաղաքի ժառանգության լավագույն վկայություններն են:

Քաղաքային միջավայրի զարգացման հաջորդ՝ ցարական շրջանում ի հայտ եկած երկու հիմնական փոփոխությունները՝ փողոցային կանոնավոր ցանցի իրականացումը, ինչպես նաև փողոցների երկայնքով բնակելի և հասարակական նոր տիպի շենքերի կառուցումը, յուրահատուկ ձևով, երկու կողմից պարփակում, բայց ոչ մի դեպքում չեն խաթարում Թաղամասի քաղաքային միջավայրը:

Տիգրան Մեծ պողոտայի կողմից կառուցված բնակելի շենքերի շարքի մեջ՝ թեև ոչ պատշաճ հանդիսավորությամբ, բայցևայնպես հստակ, առանձնանում է Ֆիրդուսի փողոցի մուտքը: Մյուս կողմից, թաղամասը եզերվում է ներկայիս Հանրապետության (Նախկին Ալավերդյան) փողոցով, որը 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին Երևանի նոր վերակազմավորվող փողոցային ցանցում առանցքային նշանակություն ձեռք բերելով՝ կրում է ոչ պատահական Նահանգային անունը: Այստեղ են վեր խոյանում Երևանի պատմության այդ շրջանի լավագույն ճարտարապետներից երկուսի՝ Վասիլի Միրզոևի և Միխայիլ Ֆոն դեր Նոնների նախագծերով կառուցված, համապատասխանաբար՝ Նահանգապետարանի (ներկայումս՝ Հանրապետության փողոց, թիվ 32), և դրան հաջորդող թիվ 28 և 30 շենքերը: Փողոցով ավելի վեր տեղակայված է ևս մեկ ճարտապետա-գեղարվեստական գոհար, ներկայիս հասցեով՝ Հանրապետության փողոցի թիվ 46 շենքը (Պ. Էսապյանի եկամտաբեր տունը):

had paved its way through the old district during almost three centuries, and which was entirely destroyed due to the new development, leaving only its currently meaningless name – today the main street forming the nexus of the district is threatened in Firdusi. The latter’s presence with its vein-like street branches is the best evidence of the city’s 18th-19th century heritage.

The next two main changes in the development of the urban environment during the tsarist period, namely the implementation of the regular street network, as well as the construction of modern types of residential public buildings along the streets, enclosed the District from two sides in an unique way, but did not in any way distort it.

In the row of residential buildings constructed from the side of the Tigran Mets Avenue, the entrance to Firdusi Street is clearly discernible – although not with appropriate pomp. From the other side, the District borders on the current Hanrapetutyan (former Alaverdyan) Street, which – acquiring key significance in Yerevan’s newly-reorganized street network in the late 19th and early 20th centuries – not incidentally bears the name Nahangayin (Provincial). The Governor’s office (currently Hanrapetutyan 32) and no. 28, 30 buildings were built here, constructed according to the designs of two of the best architects working in the said period in Yerevan’s history – Vasili Mirzoyev and Mikhail Von Der Nonne. Another architectural-artistic gem, the profitable house of P. Esapyan (Hanrapetutyan 46 building) is located up the street.

Տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սև տուֆով, արտաքին և ներքին հարուստ հարդարանքով այս շենքերը՝ զարգացնելով փողոցի արտաքին գեղարվեստական կերպարը, անմիջապես ազդեցություն են թողնում թաղամասի ներքին տարածության վերափոխման վրա: Հանրապետության փողոցից համանուն նրբանցքով դեպի Ֆիրդուսի տանող կորագծային հին ճանապարհին, ի շարունակություն Հանրապետության փողոցի երկայնքով զարգացող ոճի, կառուցվում են թիվ 6 և 11 շենքերը, իսկ թաղամասի ներսի բնակելի տների զարգացող ճարտարապետության մեջ հայտնվում են երևանյան տների այդ ժամանակվա անփոխարինելի մաս կազմող փայտե պատշգամբները:

Հարկ է նկատել, որ և՛ պարսկական, և՛ ցարական շրջանում թաղամասի, մասնավորապես՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան սահմանները շատ ավելի ընդարձակ էին և, օրինակ՝ արևելյան կողմից հասնում էին մինչև Գետառ գետը: Խորհրդային շրջանում է ահա թաղամասն աստիճանաբար նահանջում և պարփակվում ներկայիս սահմանների մեջ՝ մի կողմից սահմանազատվելով քաղաքի Գլխավոր պողոտայի երկայնքի, մյուս կողմից՝ նորաբաց Խանջյան փողոցի կառուցապատումներով:

Խորհրդային տարիներին Ֆիրդուսի թաղամասը թեև ենթարկվում է արտաքին և ներքին որոշ միջամտությունների, սակայն այդպես էլ չի քանդվում՝ պլանային տնտեսության պայմաններում հաջողելով իր տեղը զիջել քաղաքային միջավայրի այլ հատվածների:

Made of black tufa, with rich exterior and interior decoration peculiar to the given period, these buildings – developing the street’s external aesthetic image – immediately affected the transformation of the District’s internal space. As a continuation of the style developed along Hanrapetutyan Street, the houses no.6 and no.11 were built on the eponymous old curvilinear backstreet, leading from Hanrapetutyan Street towards Firdusi, while in the evolving architecture of the houses in the District’s interior, wooden balconies begin to appear, in tandem with the characteristic customs of Yerevan’s architecture of the time.

It should be noted that during both the Persian and Tsarist period, the limits of the District – especially its north-eastern and south-eastern borders – were much larger reaching, for instance, the Getar rivulet on the eastern side. The District gradually started retreating only during the Soviet period, to become encased in the current borders, demarcated on one side with buildings along the city’s Central Avenue and by the construction projects of the newly-opened Khanjyan Street, on the other side.

During the Soviet years Fidusi district underwent some external and internal interventions, but was not demolished, lending its place to other parts of the urban environment under the doctrine of planned economic development.

Այնուամենայնիվ, խորհրդային երկարուձիգ յոթ տասնամյակներն իրենց հետքն են թողնում տարածքի ամբողջական քանդման, բոլորովին նոր կառուցապատումով իրացնելու գաղափարի ներարկման և պարբերաբար հիշեցման գործում, ու ինչ-որ իմաստով հենց այսպիսի մտածողության հետևանքով է խոչընդոտվում վերնակուլյար թաղամասի հնարավոր զարգացումը թե՛ խորհրդային, թե՛ դրան հաջորդած տարիներին:

Պատմական սեղմ այս էքսկուրսի սկզբում նախանշած ճակատագրական տարեթվերի տրամաբանությամբ թե՛ Ֆիրդուսի թաղամասը, թե՛ առհասարակ ամբողջ Երևանը 21-րդ դար մուտք գործեցին, պատմական այս նոր փուլի բոլորովին այլ քաղաքային պլանավորման փիլիսոփայությանն ու սկզբունքներին դեմ հանդիման գալով:

2000-ականներից հատկապես Հյուսիսային պողոտայի կառուցմամբ սկիզբ առած գործընթացները գուժեցին ավելի քան երկդարյա շրջանը վերապրած քաղաքային միջավայրի ամենատարբեր հյուսվածքներով ձևավորված առանձին հատվածների ոչնչացման քաղաքականության մասին: Լիովին անտեսելով պատմամշակութային շերտերի ժառանգականությունն ապահովելու, նոր իրականացվող ծրագրերի հետ միահյուսելու բոլոր հնարավորությունները, որդեգրվեց բացառապես մասնավոր, գործարար շահի սպասարկմանը միտված քաղաքաշինություն կազմակերպելու մարտավարություն: Պատմական ցանկացած միջավայր դիտարկվեց սոսկ որպես հողակտոր՝ կարճաժամկետ և շահութաբեր շինարարական ծրագրեր իրականացնելու համար:

Nonetheless, the seven decades of Soviet power did have their role to play in the process of invoking and instilling the idea of the district's total demolition and regeneration with entirely new buildings. In some way, it is the result of such thinking that the possible development of the vernacular district was impeded during the Soviet period and in the years that followed.

According to the logic of the cataclysmic dates mentioned at the beginning of this brief historical excursion, both the Firdusi district and the whole of Yerevan in general, entered the 21st century by confronting the radically different urban planning philosophy and principles of this new historical stage.

The processes that were ignited since the 2000s, especially with the construction of the Northern Avenue, heralded the era of the destructive policy towards the distinct parts of the city formed out of the most diverse textures that had survived for over two centuries. Completely ignoring all the possibilities in securing the historical-cultural heredity in relation to newly-realized projects, the strategy orientated towards the service of exclusively private business interests was adopted instead. Any kind of historical environment was considered solely as a plot of land, destined for realizing short-term, profit-led construction projects.

Այդուհանդերձ այս նոր և, անկասկած, նույնքան ճակատագրական երկու տասնամյակներից հետո, չնայած անհաշվելի կորուստներին, Երևանը դեռևս պահպանում է քաղաքային պլանավորման նոր մոտեցումների կիրառման և դրանց իրականացման ներուժը:

Քաղաքի տարածքի կենտրոնական, երբ արդեն վաղուց խոնարհված են բազում եկեղեցիների և մզկիթների գմբեթները, և քաղաքային ծավալներում գերիշխող են դարձել ցաքուցրիվ եղած բազմահարկերը, առայժմ իր ուրույն կերպարանքով ու հարուստ միջավայրով և նոր մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ՝ սպասման մեջ շունչը պահած, բայց և բնականոն կյանքով, շարունակում է ապրել Թաղամասը:

Nonetheless, after these new and, certainly, equally fatal two decades, Yerevan preserves, despite countless losses, the potential of implementing and realizing new approaches in urban planning.

In the central section of the city, when the numerous domes of the churches and mosques are already destroyed, and the multi-storey buildings scattered around the urban fabric prevail in the city, the District – with its unique outlook and rich environment – holds its breath in anticipation, ready to face new challenges, but also living its life according to its natural course.

ՖԻՐԴՈՒՍ ԹԱՂԱՄԱՍԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Տիգրան Ամիրյան ²

Cultural & Social Narratives
Laboratory

Ֆիրդուսը ձևավորվել է 19-րդ դարի վերջին, երբ այստեղ գերակշռում էր Երևանի բնակչության բազմաէթնիկ մասը: Շինությունները կառուցված էին հողից, ծղոտից ու քարից, տներից շատերն ունեին հիմնավոր նկուղային հարկեր, որոնք նախկինում ծառայում էին որպես բնակելի տարածքներ: Զբաղվածությամբ բնակչության մեջ գերակշռում էին բանվորները, փոքր ձեռնարկատերերն ու հողագործները: Հողագործությունն ու առևտուրը այն հիմնական երկու զբաղվածություններն են, որոնք միշտ կարելի է նկատել փողոցում վերջին երկու հարյուրամյակների ընթացքում: 1915-1930-ականներին սկսում է թաղամասի ակտիվ վերաբնակեցումը Օսմանյան կայսրությունից գաղթած հայերով, որոնք շարունակում են փողոցի կառուցապատումը՝ գործարկելով տան մասին իրենց պատկերացումները, ավանդական ձևերն ու շինարարական տեխնոլոգիաները՝ բերված անատոլիական տարբեր մարզերից, Հունաստանից, Լիբանանից, Իրանից և այլն: Արդեն այս շրջանում կառուցվում են 1,5-2 հարկանի տներ, վերակառուցվում են հները (հիմնական նյութերը՝ քար և աղյուս):

² Թաղամասի մշակութային և սոցիալական հիշողության մասին ավելին կարող եք կարդալ հետևյալ գրքում՝ Firdus: The Memory of a Place — collective monograph ed. by T. Amiryany, S. Kalantaryan — CSN lab, Yerevan, 2019. firdusmemory.com/

³ Թաղամասի բնակչության գերակշռող մասը մինև 1930-ական թվականները մուսուլմանական էր, ինչը պայմանավորված էր հարևանությամբ գտնվող մզկիթով (Ներկայիս Վերնիսաժի մոտակայքում), փոքր թաթարական գերեզմանատան տարածքով ու Իրանի հյուպատոսի նստավայրով, որը թաղամասին էր հարում Հանրապետության փողոցի կողմից:

FIRDUSI DISTRICT FORMATION PERIODS

Tigran Amiryany ²

Cultural and Social Narrative
Laboratory

The Firdusi district was formed in the late 19th century when the population of Yerevan was prevalently multiethnic. Buildings were made of soil, straw and stone, the majority of houses had basement floors, which previously served as residential areas. Manual labor, small entrepreneurship and farming were the prevailing forms of employment. Agriculture and trade were the main types of employment, and this feature had its impact on the style of the streets during the last two centuries. In 1915-1930s active repopulation of the district starts by Armenians immigrated from the Ottoman Empire. They further the architectural style of the district housing with their indigenous ideas, traditional forms and construction technologies brought from different Anatolian regions and also from Greece, Lebanon, Iran, etc. In this period already 1,5-2-storey houses are built, and the old ones are reconstructed. The main materials used were stone and brick.

² More about the cultural and social memory of the District here: The Memory of a Place — collective monograph ed. by T. Amiryany, S. Kalantaryan — CSN lab, Yerevan, 2019. firdusmemory.com/

³In the 1930s, most of the population of Firdus was Muslims, which was mainly because of near located Mosque (currently near Vernissage), in the territory of small Tatar cemetery and in the residence of the Persian Consul, which was connected to the District from the side of Hanrapetutyanyan street.

1950-ականներից ևս մեկ շինարարական ալիք է սկսում Ֆիրդուսում (օր . ՝ Ֆիրդուսի փողոց, թիվ 80 շենքը), ամրացվում են առաջին տները: Սկսվում է Խանջյան և Չայկովսկի փողոցների կողմից կառուցապատումը: Ֆիրդուս թաղամասի կենտրոնում գործում է մսուր-մանկապարտեզը, որը դադարում է աշխատել 1989 թվականին և ժամանակի ընթացքում քանդվում՝ անտարբերության մատնվելով քաղաքային իշխանության կողմից: Արդեն 1984-ից թաղամասի վերնակույթը տները հայտնվում են ռիսկային գոտում: Ի հայտ է գալիս թաղամասի վերակառուցման նախագիծ, որով պետք է պահպանվեին թաղամասի հիմնական ուղիներն ու փողոցները, թաղամասի հյուսիսային հատվածում պետք է կառուցվեր ութ հարկանի երկու տուն և շարունակվեր յոթ հարկանի շենքով՝ Ֆիրդուսի փողոց, թիվ 70 շենքի փոխարեն: Սակայն նախագիծը չիրականացվեց Խորհրդային Միության փլուզման պատճառով:

1990-ականներին ձևավորվում է շուկան, որը տարածվում է ամբողջ Ֆիրդուսի փողոցով, և ներառում նաև Տիգրան Մեծ պողոտայի մի շարք տներ ու դեպի Մանկավարժական համալսարան տանող փոքրիկ նրբանցքը: Շուկայի սկզբնավորումով փողոցում շատ տներ ընդարձակվում են կցակառույցներով, մետաղական ու քարե վաճառակետերով, ավտոտնակներով ու պահեստներով: Փողոցի հիմնական ուղիներն ու հարկայնությունը պահպանվում են: Փողոցի բոլոր տները ձեռք են բերում երկակի ինքնություն . արտաքին՝ շուկայական, և ներքին՝ բնակելի:

2008 թվականից, երբ թաղամասի տարածքը ճանաչվում է բացարձակ գերակա հանրային շահ, բնակիչներն աստիճանաբար լքում են տները:

Since 1950s another construction wave starts in Firdusi (e.g. Firdusi street No. 80 building), simultaneously the previous series of houses are strengthened. Construction from the side of Khanjyan-Tchaikovsky streets also begins. A nursery-kindergarten was operating in the center of Firdusi district; it ceased working in 1989, and the building currently is gradually dilapidating, being abandoned by the city government. Already in 1984 it was registered that the vernacular houses of the district were at risk. A new design for the district reconstruction appears at that time, according to which the main paths and streets should have been preserved, two eight-story houses should have been constructed in the northern part of the district, followed by a seven-story building instead of Firdusi street No. 70 building. But this plan remained unaccomplished because of the collapse of the Soviet Union.

In 1990s, when the newly independent Armenia was under heavy strain because of economic hardship and a war over Nagorny Karabakh, an informal market appeared in the district and grew fast, extending all over the Firdusi street and also including a number of houses of the Tigran Mets street and the small side street heading to the Pedagogical University quarter. The formation of the market leads to a proliferation of extensions and attachments to the existing houses; sales outlets, garages, and warehouses appear, built from metal or stone. The main paths and the height (amount of stories of the buildings) of the street are preserved. All the houses of the street acquire dual identity: “external”, adapting to the market, and “internal”, that is continuing to be also residential.

Since 2008, when the district area is declared as an area under the prerogative of the “prevailing state need” (eminent domain),

Կառուցապատողները քայքայման են ենթարկում 19-րդ դարի կառույցները և քանդում հասարակ տները: Լիովին ոչնչացվում են հյուսիսարևելյան հատվածի տները, իսկ արևմտյան հատվածում՝ Ֆիրդուսի փողոց, թիվ 80 տան ետնամասում, արդեն իսկ սկսվել է նորակառույց շենքի հիմքի շինարարությունը: 2020 թվականին կառուցապատողները քանդում են Հանրապետության նրբանցքում գտնվող փորագրված սև տուֆից կառուցված Հանրապետության նրբանցք, թիվ 11 տունը, որի վրա առկա էին դեկորատիվ տարրեր, և մասնակի քանդել են Հանրապետության նրբանցք, թիվ 6 աղյուսաշեն շենքը:

Տարածքի բաշխումը. արտաքին և ներքին տարածքներ

Թաղամասի ներսում տների մեծամասնությունը բավական պարզ կառուցվածք ունի, սակայն որոշ վերնակուլյար շինություններ կառուցված են տուֆից ու աղյուսից և 19-րդ դարի վարպետների աշխատանքի նմուշներ են: Նման շինությունների մեծ մասը գտնվում է հյուսային հատվածում՝ Հանրապետության նրբանցքին կից: Ֆիրդուսի փողոց, թիվ 17 եռահարկ տունը կառուցվել է 1930-ականներին, ունի ճարտարապետական նախագիծ, թիվ 30 և թիվ 18-26(բ) տները կառուցվել են 20-րդ դարի առաջին կեսին՝ ճարտարապետ Հայկ Կիրակոսյանի նախագծով: Սակայն վերնակուլյարի և ոչ վերնակուլյարի սահմաններն այստեղ ջնջվում են, քանի որ թաղամասի բոլոր շինությունները, որոնք ունեն նախագիծ ու ճարտարապետ, կառուցվել են բնակիչների ակտիվ մասնակցությամբ:

which means that the residents have to abandon their houses selling them with the land to the buyer assigned by the state, the residents start gradually leaving their houses. Developers undermine the 19th century buildings and destroy houses which are perceived as non-valuable. The houses of the north-eastern part are fully destroyed, and in the western part, in the back of the Firdusi street No. 80 house the construction of a foundation for a new building has already started. In 2020 developers demolished the Hanrapetutyan side street No. 11 house, made of engraved black tufa and rich with decorative elements; and partly demolished the Hanrapetutyan side street No. 6 building, made of brick.

The Allocation of Space in the Area: the “Internal” and the “External” Areas

The majority of houses inside the district have quite simple structure, but some vernacular buildings are made of tufa and brick, and represent the samples of the 19th century masters' work. Most of these buildings are in the Northern part of the district, close to the Hanrapetutyan side street. The No. 17 three-story house in Firdusi street was constructed in 1930s, it has architectural design; the No. 30 and No. 18-26 (b) houses were constructed in the first half of the 20th century by the design of the architect Hayk Kirakosyan. But the boundaries between vernacular versus non-vernacular styles are melted, because even those buildings that have had design and architects were constructed with the active participation of the residents.

Պետության կողմից պահպանվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձան են ճանաչված հիմնականում ճակատային շենքերը (Տիգրան Մեծ պողոտա և Հանրապետության փողոց), իսկ Խանջյան և Բուզանդ փողոցների խորհրդային մոդեռնիզմի ու կոնստրուկտիվիստական ոճերով կառուցված շենքերը պահպանության ենթակա են ըստ իրենց պատմական ու մշակութային նշանակությունների և ներկայացուցչական ճարտարապետության: Մի կողմից մշակութային ժառանգություն ճանաչված շենքերի ու վերնակուլյար կյանքի նման մոտ տեղակայումը կերտում է տեղի բնակչության կղզիացած ու հակադրվող ինքնությունը, սակայն մյուս կողմից 19-րդ դարի մշակութային հուշարձանները առաջ են քաշում ֆիզիկական անցյալի գաղափարը, որն արդիականացվում է հենց թաղամասի ներսում:

Միջմշակութային տարածք

Թե՛ համայնքի հիշողության մեջ, թե՛ ճարտարապետական ֆրագմենտներում պահպանվել է հայերի ու մուսուլմանական բնակչության խաղաղ համակեցության պատմությունը, որն ունի մոտ մեկ հարյուրամյակի տևողություն և ավարտվում է 1988 թվականին: 1990-ականներին շուկայի ձևավորմամբ շարունակվում է միջէթնիկ խաղաղ համակեցությունն արդեն հայերի և իրանցիների միջև, որը շարունակվում է մոտ 20 տարի: ⁴

⁴ 1988 թվականին Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Ֆիրդուսի ադրբեջանցի բնակչությունը լքում է թաղամասը: Բայց հայ բնաչությունը պահպանում է մուսուլմանների հետ խաղաղ համակեցության մասին հիշողությունը, որի շնորհիվ 1990-ականներին Իրանից եկած վաճառականները կարողանում են հեշտությամբ ինտեգրվել տեղի համայնքին: Մինչև 2010-ականները շուկան ակտիվ ու շարունակական կերպով գործում է այս հատվածում, և իրանցի վաճառականները վարձում են ոչ միայն տնամերձ վաճառասրահները, այլև բնակելի տարածքները: Բացի այդ, Տիգրան Մեծ պողոտայում մինչև 2019 թվականը գործում էին իրանական սրճարաններ, տուրիստական գործակալություններ և այլն:

The state identifies as immovable monuments of history and culture only a few facade buildings on the Tigran Mets avenue and the Hanrapetutyan street. Meanwhile, the buildings on the Khanjyan and Buzand streets represent the Soviet modernist and constructivist styles and therefore have to be preserved, given their historical and cultural significance and representative architecture. The existence next to each other of buildings recognized as cultural heritage, on one hand, and those representing the vernacular style, on the other, may be contributing to an island-like isolation of the two types of inhabitants from each other and mutually juxtaposing their identities. At the same time, the 19th century monuments physically materialize the idea of the past history of the city, history which is actualized and modernized in the immediate neighborhood, inside the district.

An Intercultural Area

The memory of the community and the fragments of the architecture preserve the history of peaceful coexistence of the Armenian and Muslim populations; it lasted about a century and ended in 1988, with the start of the Karabakh conflict, when Muslim population left. In 1990s, with the formation of the market, the interethnic lifestyle and peaceful coexistence had a come back: Armenians and Iranians interacted here for about 20 years ⁴,

⁴In 1988, as a result of Karabagh conflict, Azerbaijani population of Firdusi abandons the District. But the Armenian population preserves the memory of peaceful co-existence with the Muslims, thanks to which in 1990s merchants from Iran were able to easily integrate with the community. Till 2010s the market continues its active and continuous operation in this area and the Iranian merchants rent not only adjacent shops, but also residential areas. Moreover, till the year of 2019, there were Iranian cafés, tour agencies in Tigran Mets street.

Խորհրդային տարիներին Ֆիրդուսը կեցավայր էր նաև նույն թաղամասում գտնվող Մանկավարժական համալսարանի ուսանողների համար, որոնք՝ գալով այլ մարզերից, հաճախ սենյակներ ու տներ էին վարձակալում այստեղ՝ պայմանավորված տեղակայման հարմարավետությամբ, մատչելիությամբ ու տեղի բնակչության հյուրընկալությամբ:

Հավաքական լոկալ ինքնությունն ու ճարտարապետության ազդեցությունը

Թաղամասը ճյուղավորվում է հիմնական Ֆիրդուսի փողոցից ու նրբանցքներով ստեղծում փոքրիկ անցումներ դեպի Խանջյան փողոց ու Հանրապետության նրբանցք: Մեկ փողոցից մյուսը հաճախ կարելի է պարզապես անցնել տնամերձ բակերով: Մի քանի տներ կարող են ունենալ ընդհանուր բակ ու մուտք: Այս ամենը ստեղծում է հաղորդակցման ցանցային ձև, որն իր ազդեցությունն է ունենում տեղի բնակչության ինքնության վրա: Հավաքական ու ընտանեկան հիշողությունները ձևավորվում են այդ ցանցային հաղորդակցության մեջ, որն իրար է կապում առօրեականությունն ու ընտանեկան պատմությունները: Ցածրահարկության ու ներքին բակերով հաղորդակցության շնորհիվ այստեղ չկա տարածքի խիստ հիերարխիա: Մինչ օրս այստեղ պահպանվում են թաղամասի ու քաղաքի համար կենցաղի գործառնական վայրեր, ջրի աղբյուրներ, որոնք ընդհանուր են մի քանի ընտանիքների համար և բաց՝ մյուս բնակիչների օգտագործման համար:

until the closure of the market. During the Soviet years Firdusi was also an area where the students of the Pedagogical University, located in the same district, coming from different regions of Armenia, often rented rooms and houses there; the location was convenient and affordable, and the residents were hospitable.

The Collective Local Identity and the Impact of Architecture

The district branches out from the main Firdusi street and creates, through side streets, small passages towards the Khanjyan street and the Hanrapetutyan side street. It is often possible to move from one street to another via passing through the adjacent yards. Several houses may have joint yards and entrances. This generates a form of networked communication, which has its effect on the identity of the population. The community and family memories are formed in this networked way, which links the everyday life of the community and the family stories. Thanks to the low-story system of the houses and the interconnected yard system social relations in the district do not follow the rules of strict hierarchy. The functional places usable for daily life needs and water springs based in yards are still functioning today, serving the community of the district and the city in general; they are common for several families simultaneously and are open and accessible to other residents and guests.

30 տարվա ընթացքում հայտնված վաճառակետերն ու ավտոտնակները բնակիչներին ընտելացնում են առևտրին: Կենցաղն ու վաստակն այստեղ կապված են հենց թաղամասի ու իրենց տան արտաքին ճակատային մասի հետ, ինչն էլ ավելի է տեղայնացնում համայնքը:

The sales stories and garages which appeared during the last 30 years make the residents used to the lifestyle related to trade. The daily life and income here are directly linked to the district and to the facade part of the houses; this, in its turn, further roots the community in its inalienable environment.

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**



**MAIN PROVISIONS
FOR THE PROPOSAL**



ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Մրցույթի առաջարկները պետք է պարունակեն ներքոնշյալ չորս հիմնական խնդիրների իրականացմանը նպաստող լուծումներ.

- քաղաքային որակյալ միջավայրի ձևավորում,
- պատմական շերտի պահպան և ինքնաբուխ կայացած միջավայրի ներդաշնակ զարգացում,
- բնապահպանական տեսակետից պատասխանատու մոտեցում:
- տնտեսապես արդարացվածություն և կայունություն:

Հատկապես հաշվի առնելով Երևանի պատմական կենտրոնի տարածքում վերջին տասնամյակներում ազդեսիվ կառուցապատման (Հյուսիսային ու Գլխավոր պողոտաներ, «Հին Երևան» նախագիծ և այլն), ինչպես նաև ապագայում կանխատեսվող խոշոր նախագծերը (Կոնդ, Նորագյուղ և այլն) առաջարկները պետք է նոր նշաձող սահմանեն քաղաքային միջավայրերի ձևավորման և պլանավորման բնագավառներում, խթանեն սոցիալական տարբեր խմբերի հնարավոր ինտեգրումն ու նրանց կողմից թաղամասի միջավայրի ընկալումների փոփոխությունը:

MAIN PROVISIONS FOR THE PROPOSAL

The proposals should suggest solutions to the four issues stated below:

- Formation of an urban environment with high standards of living;
- protection of historic layers in relation to the harmonious development of the spontaneously-formed environments;
- responsible environmental approach;
- economic feasibility and sustainability.

Taking into account the aggressive real-estate development projects (North and Main Avenues, Old Yerevan project, etc.) of the last few decades, as well as the anticipated future projects (Kond, Noragyugh and etc.), the proposals should formulate a new standard for urban environment planning, facilitate the integration of different social groups and the transformation of their perceptions of the District.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՐԱԿՅԱԼ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Մասնակիցները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն քաղաքային միջավայրի ձևավորմանը՝ առաջարկելով մասնավորապես.

- Ներքին հետիոտն, հեծանվային և մեքենաների հոսքերի կազմակերպման ցանց, որոնք պետք է փոխլրացնեն միմյանց՝ հատկապես կարևորելով հետիոտն շարժումն ու հանրային տարածքները,
- Քաղաքային շարժման գոյություն ունեցող համակարգին կապվելու մոտեցումներ՝ նպատակ ունենալով Թաղամասը կապել խոշոր հանգույցների՝ Հանրապետության հրապարակի, Գլխավոր պողոտայի, Վերնիսաժին հարող հատվածի և Այրարատ (Ռոսիա) կինոթատրոնի հետ,
- հանրային տարածքների բազմազանությունը և փոխկապակցվածությունը զարգացնող լուծումներ,
- անմիջական հարևանությամբ գտնվող հանրային նշանակության կառույցների գործունեության զարգացմանը խթանող լուծումներ,
- Հաշվի առնելով թաղամասի հարևանությամբ գոյություն ունեցող խոշոր տրանսպորտային հանգույցները, ինչպես նաև մետրոյի առկայությունը, ավտոկայանատեղերի անհրաժեշտ նվազագույն քանակ ապահովող, շարժիչային փոխադրամիջոցներից ազատ՝ հետիոտնային գոտիներ առաջարկող մոտեցումներ:

FORMATION OF A HIGH QUALITY URBAN ENVIRONMENT

Participants should pay special attention to the development of the urban environment, offering in particular:

- Internal pedestrian, cycle and vehicle movement, complementing and not interfere each other, especially underlining pedestrian movement and public spaces;
- existing urban flow system with the aim of connecting the District to greater junctions, such as Republic Square, Main Avenue adjunct area with the Vernissage (Flea market) and Ayrarat (Rossia) cinema;
- development of diverse public spaces, as well as solutions boosting interconnectivity of spaces;
- developing and spurring solutions for the neighbouring public institutions;
- taking into account the adjunct large transport junctions, as well as the metro (subway), it is necessary to provide the required minimum number of parking lots and offer car-free pedestrian zones.

ՊԱՏՄԱԿԱՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԲՈՒԽ ԿԱՅԱՑԱԾ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պատմականորեն ձևավորված քաղաքային միջավայրը, որն իր ուրույն քաղաքային՝ շուկայական տրամաբանական զարգացումն է ունեցել, կարիք ունի նորովի բացահայտման և վերաբժնորման: «Ներդաշնակ գոյություն» ասելով՝ հասկանում ենք Երևանի համար նոր տիպի միջավայրային վերաբերմունք, որում պատշաճ, հարգալից մոտեցում կլինի ինքնաբուխ զարգացումներին, որոնք տեղի են ունեցել նախորդ երկու դարերի ընթացքում, և որը նախադրյալներ կստեղծի ապագայում նույնանման զարգացումների համար:

Մասնավորապես ակնակալվում է.

- պահպանել պատմականորեն ձևավորված կառուցապատման հյուսվածքն ու ուղղությունները,
- վերինտեգրել այն շինություններն ու դրվագները, որոնք կարող են պատկերացում տալ Թաղամասի անցյալի վերաբերյալ, և որոնք պետք է սահմանեն նաև Թաղամասի ապագան,
- հանրապետության հրապարակի տեսողական ամբողջականությունը չխաթարող մոտեցումներ՝ հաշվի առնելով Հանրապետություն փողոցին ու Տիգրան Մեծ պողոտային հարող հուշարձանները,
- հնարավորինս պահպանել Թաղամասի տարածքում առկա կառուցապատման տիպաբանությունը,
- ուշադրություն դարձնել տարածքում առկա պարտեզների վերօգտագործմանը և դրանք ներառել առաջարկներում:

PROTECTION OF HISTORIC LAYERS AND HARMONIOUS EXISTENCE OF SPONTANEOUS ENVIRONMENTS

The historically formed urban environment, having its unique, market formation pattern, needs to be rediscovered and reevaluated. By harmonious existence we mean a new environmental approach for Yerevan with a proper respectful approach to spontaneous developments, arising during the past two centuries, as well as creating prerequisites for future similar developments.

Particularly expected:

- preserve urban fabric and historical directions;
- reintegration of buildings and fragments, which can showcase the District's past and can also define the future of the District;
- without disrupting the visual integrity of the Republic Square, also taking into account the monuments neighboring Hanrapetutyan Street and Tigran Mets Avenue;
- to a highest extent possible preserve the current construction typologies of the District;
- pay particular attention to the re-use of existing gardens and include them into the suggested proposals.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ

RESPONSIBLE ENVIRONMENTAL APPROACH

Քաջատեղյակ լինելով բնապահպանական համաշխարհային և տեղական մարտահրավերներին, մասնակիցներն իրենց առաջարկներում պետք է զարգացնեն համակարգային լուծումներ, որոնք հնարավորինս կթեթևացնեն քաղաքային ինժեներական ցանցերի վրա նոր թաղամասի զարգացման բեռը: Միևնույն ժամանակ դրական ազդեցություն ունենալով հարակից տարածքերի միկրոկլիմայի վրա՝ նվազագույնի հասցնելով քաղաքային ջերմային կղզյակների գոյացումը Թաղամասի տարածքում: Մասնավորապես.

Being aware of the global and local environmental challenges, in their proposals the participants should develop systemic solutions aimed at reducing extra loading on engineering networks because of the new development of the District. At the same time, having a positive effect on the microclimate of the surrounding, minimizing the formation of urban heat islands in the District. In particular we expect:

- Հաշվի առնել անձրևաջրերի վերօգտագործմանը և ջրաթափանց լանդշաֆտային լուծումների շնորհիվ հեղեղատար համակարգի բեռնաթափման հնարավորությունը,
- հաշվի առնելով տեղանքի բնակլիմայական պայմաններն՝ առաջարկել ամառվա տապից և ձմեռվա ցրտից ապաստան տվող կառուցապատում,
- զարգացնել էներգախնայող կառույցներ և լուծումներ,
- առանձնահատուկ ուշադրության արժանացնել շրջակա միջավայրի վրա ցածր ածխածնային ազդեցություն ունեցող նյութերի օգտագործմանը:
- Consider an opportunity for rainwater re-use approaches, as well as natural absorbing landscaping solutions in order to reduce the burden on stormwater systems;
- propose design solutions which will reflect on specific climate conditions: shelter from the summer heat and from the winter cold;
- develop energy efficient solutions and buildings;
- stress the use of materials with low carbon impact on the environment.

ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱՐԴԱՐԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ECONOMIC FEASIBILITY AND SUSTAINABILITY

Գտնվելով մայրաքաղաքի անմիջական կենտրոնում, Թաղամասն իրենից ներկայացնում է յուրահատուկ պատմական միջավայր, բայց նաև՝ տնտեսական առումով արժեքավոր տեղանք:

Այդ իսկ պատճառով, մասնակիցներից պահանջվում է հիմնավորել իրենց առաջարկների տնտեսական նպատակահարմարությունը՝ ջանալով գտնել պատմական շերտերի պահպանման, շրջակա միջավայրի բարելավման և նոր կառուցապատման արդյունավետ համադրություն:

Նախընտրելի է իրականացնել խառը նշանակության կառուցապատում՝ ապահովելով տարբեր նշանակության օգտակար ստեղծվող մակերեսների հետևյալ մոտավոր, բայց ոչ պարտադիր հարաբերակցությունը.

- Առաջնային նշանակության՝ բնակելի, գրասենյակային, սպասարկում, արհեստագործական (թեթև/մաքուր արտադրություն)՝ մոտ՝ 60%,
- երկրորդային/օժանդակ՝ առևտուր, ժամանց, զբոսաշրջային և հյուրընկալման, կրթական/նախակրթական՝ մոտ 40%

Մասնակիցները պետք է իրենց առաջարկներում կատարեն նաև ներդրումների վերադարձելիության խոշորացված դիտարկումներ:

Being located in the very center of Yerevan, the District has a unique historical environment, as well as a valuable location from an economic perspective. Therefore participants are required to substantiate the economic expediency of their proposals, trying to find a balanced and sustainable synergy between preservation of historical layers, improvement of environmental and living conditions and new real estate developments.

It is recommended to conduct mixed-use construction to ensure the following rough but not obligatory ratio of sustainable surfaces of various significance:

- Primary use: residential, offices, services, workshops - app. 60%
- secondary/supplementary use: commerce, HORECA, educational: app. 40%

The participants are expected to present an enhanced review of projected return on the investment.

Տարածքի կառուցապատման խտությունը կարող է տատանվել 40-80%-ի միջև:

Հարկայնության սահմանափակումներ չկան և առաջարկվող կառուցապատումը կարող է ունենալ տարբեր բարձրություններ, առկա հուշարձանների, պահպանվող կառույցների ու կառուցապատումի հարաբերակցությունից ելնելով հիմնավորված և առաջադրանքի հիմնական դրույթներին չհակասելով:

Վերջնական արդյունքում նախատեսվում է շուրջ 150 հազար քառակուսի մետր օգտակար մակերես:

Հաշվի առնելով մրցույթի հայեցակարգային լինելը, ինչպես նաև փաթեթի պատրաստման ժամանակային և մյուս սահմանափակումները, մրցույթի մասնակիցներն ունեն շոշափելի ազատություն՝ իրենց հայեցողությամբ, վերոնշյալ կետերի ոգու և տրամաբանության շրջանակում հանդես գալու նորարարական և այլընտրանքային առաջարկներով:

Չնայած այն փաստին որ մրցույթի կազմակերպիչները հաստատատակամ են մրցույթի միջոցով լավագույն լուծումները բացահայտելու և դրանք քաղաքային իշխանություններին ներկայացնելու գործում, միևնույն ժամանակ ընդունում են, որ հայեցակարգային առաջարկները կարող են չպատասխանել բոլոր հարցադրումներին, և հաղթող նախագծերը կարող են ենթարկվել էական փոփոխությունների:

Area construction density may fluctuate between 40-80 %.⁵

There are no restrictions on the number of floors, the height and ratio. Proposals may vary depending on the existing monuments, protected areas and construction, and if in compliance with the main provisions mentioned in this guide book.

As a result, approximately 150 thousand square meters (app. 1.6 million square foot) of useful area can be foreseen.

Taking into consideration the conceptual essence of the competition, as well as the timeline and other limitations, the participants of the competition have a tangible freedom to come up with innovative and alternative proposals within the spirit of the aforementioned points.

Though competition organizers believe the competition will pave the way to explore better solutions to present to the city authorities, in the meantime they agree that conceptual proposals may not meet all the requirements and answer to formulated questions, and as a result winning projects may undergo significant changes.

⁵ Yerevan does not have any detailed zoning regulation for this area that might be eligible for consideration.

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

PROVIDED MATERIALS

1. Երևանի կենտրոնի տեղագրական գծանահանում (հանութագրում) Autodesk AutoCAD ձևաչափով՝ Alt33_Yerevan_Topo.DWG
 2. Առկա իրավիճակի տեղագրական գծանահանում (հանութագրում) Autodesk AutoCAD ձևաչափով՝ Alt33_District_Topo.DWG
 3. Թաղամասի շենքերի լուսանկարները և տեղադիրքը՝ Alt33_Images.ZIP
1. Topographic Survey of Yerevan Center in the Autodesk AutoCAD format: Alt33_Yerevan_Topo.DWG
 2. Topographic Survey of current situation in the Autodesk AutoCAD format: Alt33_Yerevan_Topo.DWG
 3. The images and location of the buildings of the District: Alt33_Images.ZIP

Մրցութային փաթեթը կարող եք բեռնել հետևյալ հղմամբ՝

\ The competition package is ready for you to download from this link:

https://www.dropbox.com/s/1e46ytat9wkspwh/Alt33_Files.zip?dl=0



Մետրոյի գոյություն ունեցող հետազիծը / Metro (Subway) outline

ԱՌԱՋԱՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Առաջարկը պետք է կազմված լինի 700 × 1000 մմ հորիզոնական (landscape) չափի 2-3 պաստառից՝ 300 dpi լուծաչափով (resolution) և պետք է ներկայացվի Adobe Acrobat (PDF) ձևաչափով:

Յուրաքանչյուր պաստառ պետք է վերին աջ անկյունում ունենա ութանիշ համար՝ որպես դիմումի նույնականացման ծածկագիր: Նույնականացման ծածկագիրը պետք է լինի Tahoma Bold կամ այլ ստանդարտ տառատեսակով, 18 pt տառաչափով:

Թվային նյութերը պետք է անվանվեն հետևյալ կերպ՝ ներառելով նույնականացման ծածկագիրը (ID):
ID_DESIGN.PDF
Օր.՝ 01234567_DESIGN.PDF

Յուրաքանչյուր դիմորդ պետք է պատրաստի A4 չափի տեղեկատվական թերթիկ՝ անվանելով այն առաջարկի ութանիշ նույնականացման ծածկագրով (ID), ID_INFO.PDF: Տեղեկատվական թերթիկը պետք է ներառի նույն ութանիշ թվերը, առաջարկի հեղինակ(ներ)ի անբողջական անուն(ներ)ը, կոնտակտային տվյալները՝ ներառյալ փոստային դասիչը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Հավելյալ ֆայլերի անվանումները պետք է ստեղծել նույն տրամաբանությամբ:

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն Adobe Acrobat (PDF) ձևաչափով և միասին չգերազանցեն 100 Mb-ը:

APPLICATION REQUIREMENTS

The proposal needs to be presented in a PDF format on minimum 2 maximum 3 sheets in 700x1000mm dimension, in 300 dpi resolution and horizontal (landscape) orientation.

Each sheet needs to have an eight-digit number on the top right corner as an identification code for each application. Identification code should be in Tahoma Bold or in any other standard font with 18 pt.

Digital materials, with the identification code, should be named as aforementioned: ID_DESIGN.PDF
01234567_DESIGN.PDF

Each applicant needs to make another A4 Info Sheet with a file name of the same eight-digit identification code. The body of Info Sheet needs to have the same eight-digits, full name(s) of the author(s) of the proposal and also the creative input percentage of each author, contact information that must include postal address, phone number and email address.

The name of the additional files should be created in the same logic.

All final files for application should be in Adobe Acrobat format (PDF) and should not exceed 100 Mb altogether.

Վերջնական ֆայլերը պետք է ուղարկել նշված կայքերից որևէ մեկի միջոցով՝ WeTransfer, Dropbox, OneCloud, iCloud: Այլ աղբյուրներից ստացված ֆայլերը կհամարվեն թերի դիմումներ: Ուղարկելուց հետո առաջարկների փաթեթների հասանելիությունը պետք է լինի առնվազն 3 օր:

Առաջարկը պետք է ուղարկել alt33@urbanlab.am էլ. փոստի հասցեին՝ վերնագրի դաշտում նշելով նույնականացման ութանիշ թիվը: Տեղեկատվական թերթիկը պետք է կցել նամակին, իսկ նամակի տեքստում պետք է տեղադրել առաջարկի բեռնման ուղիղ հղումը:

Տեխնիկական խնդիրների դեպքում կազմակերպիչները մասնակցի հետ կկապվեն նույն էլ. փոստի հասցեով՝ մրցույթի վերջնաժամկետի ավարտից հետո 3 օրվա ընթացքում: Խնդրում ենք այս ընթացքում պարբերաբար ստուգել ձեր էլ. փոստը:

Առաջարկն ուղարկելուց հետո կստանաք քարտեզաչող ստացման հաստատում:

The final files need to be sent via one of these file sharing websites: WeTransfer, Dropbox, OneCloud and iCloud. Files from other sources will be considered as incomplete applications. The application packages need to be accessible for 3 days at the very least.

An email with a direct download link needs to be sent to alt33@urbanlab.am email address with the eight digits in the subject line. The Info Sheet needs to be attached to the email with direct link from one of the above mentioned file sharing websites in the email body.

In the event of technical issues, the organizers will contact the sender through the same email address within 3 days after the deadline of the competition. We kindly ask you to check your mailbox during that period.

A confirmation email will be sent to each application upon successful receipt of the proposal.

Ներկայացված առաջարկը պետք է պարունակի ստորև նշված գծագրերը, որոնց քանակը կարող է ավելին լինել . կախված առաջարկի բնույթից կարող են ավելացվել.

Submitted proposal needs to consist the below mentioned drawings, which can be exceeded based on the nature of the proposal:

- Թաղամասը քաղաքի կենտրոնի հետ համադրված, որտեղ պետք է երևան շարժման հետ կապված հոսքերն ու լուծումները,
- Թաղամասի գլխավոր հատակագիծ, նվազագույնը՝ 1:1000 մասշտաբով,
- Շարժման ուղևագիծ
- Թաղամասի կտրվածք(ներ) կամ փռվածք(ներ)
- Թռչնի հայացքից պատկեր(ներ)
- Ներքին տարածության առնվազն երեք պատկերտ
- Առաջարկի ամփոփ նկարագիր, առավելագույնը 500 բառ:

- District 33 (Firdusi) overlapped with the center of the city
- Master Plan Of the District in minimum 1:1000 scale
- Flow chart diagram
- District Sections and Elevations
- Bird eye view
- Urban Design Renderings
- Short description of the proposal,, maximum 500 words

Բոլոր տեքստերը պետք է լինեն անգլերեն: Հայերեն տարբերակները կամ թարգմանությունները ցանկալի են՝ բայց ոչ պարտադիր:

All textual information needs to be in English. Armenian versions or translations are welcome but not an essential requirement.

Ուղարկված առաջարկի վրա չպետք է լինեն հեղինակ(ներ)ի անուն(ներ), իրավաբանական և/կամ ոչ պաշտոնական ստորագրություններ: Այս տվյալները պետք է լինեն տեղեկատվական թերթիկում միայն:

No sign of a legal and/or informal entity, name(s) of the author(s) should be put on any proposal submitted. This info can appear on the Info Sheet only.

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցույթը բաց է հետաքրքրվող բոլոր անհատների և թիմերի համար ամբողջ աշխարհից, առանց որևէ սահմանափակման:

Մասնակցությունն անվճար է, անհրաժեշտ է միայն գրանցվել:

ELIGIBILITY

Competition is open for all interested individuals and teams from around the world without any restriction.

There is no application fee for participation.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄ

Մասնակիցներից կպահանջվի մրցույթի ընթացքում պահպանել գաղտնիություն և չբացահայտել իրենց: Առաջարկի որևէ պատկեր կամ այլ նյութեր չեն կարող հրապարակվել, տրամադրվել երրորդ կողմի կամ լրատվամիջոցների, քանի դեռ մրցույթի ավարտի պաշտոնական հայտարարություն չի արվել:

PUBLICITY

Participants will be required to maintain confidentiality throughout the competition and not identify themselves or release any design proposal images etc. To any third parties or media outlets until an official announcement has been made.

ԿԱՆՈՆՆԵՐ

Գրանցվելու արդյունքում ստանալով մրցութային փաթեթը և ներկայացնելով առաջարկ՝ հայտատուները ընդունում են մրցութի կանոնները:

Մրցութի կանոնները կազմվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի 20-րդ Գլխավոր համաժողովի կողմից 1978 թվականին Փարիզում ընդունված «Ճարտարապետական և քաղաքաշինական միջազգային մրցույթների վերաբերյալ ստանդարտ կանոնակարգի» համաձայն:

Նախագծի հեղինակները պահպանում են նախագծերի հեղինակային իրավունքները. առանց վերջիններիս պաշտոնական, գրավոր համաձայնության, նախագծերը փոփոխության ենթակա չեն:

Ժյուրիի անդամներն իրավունք ունեն չընդունելու ցանկացած նախագիծ, որը չի համապատասխանում փաթեթում ներկայացված մրցութի պարտադիր պահանջներին և կանոններին:

Բոլոր նախագծերը, ներառյալ ժյուրիի կողմից չընդունվածները, արդյունքների ամփոփումից հետո կցուցադրվեն մրցութի կայքում: Ժյուրիի անդամների ստորագրություններով զեկույցը նույնպես կլինի հասանելի:

Ժյուրիի անդամները, ինչպես նաև կազմակերպիչները, կարող են չսահմանել գլխավոր մրցանակ՝ մրցանակային ֆոնդն ամբողջությամբ կամ մասնակի բաշխելով հաղթողների միջև:

Շահերի բախման առկայության դեպքում կազմակերպիչներն իրավունք ունեն որակազրկելու ցանկացած մասնակցի:

RULES AND REGULATIONS

By requesting the Competition Package and submitting the Proposal all participants are accepting the rules and regulations of the competition.

It was developed based on “Standard regulations for international competitions in architecture and town planning” approved by UNESCO 20th General Conference in Paris, 1978.

The author of any design will retain the copyright of their work, no alterations may be made without applicant’s formal written consent.

The Jury has the right to disqualify any design which does not conform to the mandatory requirements, instructions or regulations for the competition presented in this package.

All submitted projects, including those disqualified by the Jury will be showcased on the competition website. A copy of the signed report of the Jury also needs to be part of it.

The Jury, as well as the organizers have the right to not award the first prize by allocating the entire award fund between winners.

ԺՅՈՒՐԻ

Մրցույթի Ժյուրիի կազմում յոթ մասնագետներ են, հիմնականում ճարտարապետներ Հայաստանից և արտերկրից: Ժյուրին իր կազմից կընտրի աշխատանքները համակարգող:

Ժյուրիի անդամներն են (ըստ այբբենական հերթականության).

1. Արեգ Ասատրյան, ճարտարապետ, Նյու Յորքի քաղաքապետարանի Շենքերի վարչության նախագծերի փորձաքննության ղեկավար (ԱՄՆ)
2. Ջորջ Արբիդ, ճարտարապետ, ճարտարապետության արաբական կենտոնի տնօրեն (Լիբանան)
3. Նարինե Միրզայան, ճարտարապետ, MNO-ի հիմնադիր, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս (ԱՄՆ),
4. Սևադա Պետրոսյան, ճարտարապետ (Հայաստան)
5. Իրինա Սուբոտիկ, արվեստաբան, (Սերբիա)
6. Թալին Տեր-Մինասյան, պատմաբան, Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի դասախոս (Ֆրանսիա)
7. Մովսես Տեր Գեորգեան, ճարտարապետ (Բելգիա)

JURY

The Competition Jury consists of seven professionals, the majority being architects from Armenia and abroad. Jury will select a coordinator for their work.

The jury members are (in an alphabetical order):

1. Dr. George Arbid, Architect, Director of Arab Center for Architecture (Lebanon)
2. Areg Asatryan, Architect, New York City Building Department Lead Plan Examiner (USA)
3. Movses Der Kevorkian, Architect (Belgium)
4. Narineh Mirzaeian, Architect, Founder & Principal of MNOOffice and Faculty at UCLA, School of Architecture and Urban Design (USA)
5. Sevada Petrossian, Architect (Armenia)
6. Dr. Irina Subotić, Art historian, (Serbia)
7. Dr. Taline Ter Minassian, Historian, Professor at the National Institute of Oriental Languages and Civilizations (France)

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Հաշվի առնելով մրցույթի շահույթ չհետապնդող բնույթը և ժամանակային սահմանափակումները, կազմակերպիչները մրցույթի հայտարարման պահին առկա ֆինանսական հնարավորությունների շրջանակում նախատեսել են դրամական հետևյալ մրցանակները.

1-ին մրցանակ՝ 1'250'000 AMD
(մոտավորապես 2'500 EUR)

2-րդ մրցանակ՝ 750'000 AMD
(մոտավորապես 1'500 EUR)

3-րդ մրցանակ՝ 250'000 AMD
(մոտավորապես 500 EUR)

Մրցույթի կազմակերպիչները փորձելու են ներգրավել հավելյալ ֆինանսական և խրախուսական միջոցներ՝ ապահովելու պատշաճ մրցանակային բյուջե:

Մրցանակ ստացած նախագծերի հեղինակների անունները և նրանց նախագծերը կտարածվեն տեղական ու միջազգային մասնագիտական կայքերում: Միայն մրցանակակիրներին կշնորհվի պատվոգիր:

Հաղթող նախագծի առաջխաղացմամբ կզբաղվեն մրցույթի կազմակերպիչները, որի համար ձեռք կբերվեն լրացուցիչ պայմանավորվածություններ՝ բանակցությունների հիման վրա:

AWARDS

Taking into account the non-profit nature of the competition, as well as tight deadlines, the organizers, considering the available financial resources, have delegated the following awards:

1st place : 1'250'000 AMD
(app. 2'500 EUR)

2nd place: 750'000 AMD
(app. 1'500 EUR)

3rd place: 250'000 AMD
(app. 500 EUR)

The competition organizers will try to involve additional financial resources to ensure a proper award budget.

Names of the winners and their projects will be published and disseminated in local and international professional media and websites. Only winners will receive certificates.

The competition organizers will promote the winning project for which an agreement should be signed after additional discussions between both sides.

ԺԱՄԿԵՏՆԵՐ

Մրցույթի հայտարարում և մասնակիցների գրանցման մեկնարկ՝ 10 հուլիս 2020

Գրանցված մասնակիցներին մրցութային փաթեթի տրամադրում՝ 15 հուլիս 2020

Առաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ 10 սեպտեմբեր 2020

Ընտրության վերջնաժամկետ՝ 20 սեպտեմբեր 2020

Հաղթող նախագծերի հայտարարում՝ 21 սեպտեմբեր 2020

Ներկայացված նախագծերի առցանց ցուցադրություն՝ 25 սեպտեմբեր 2020 (նվազագույնը վեց ամիս ժամկետով):

DATES

Announcement Date and Registration:
10 July 2020

Making the competition package available for the registered participants:
15 July 2020

**Submission Deadline:
10 September 2020**

Selection Deadline: 20 September 2020

Winning project announcement: 21 September 2020

Online exhibition of the submitted projects: 25 September 2020 (at least 6 months)

ԿԱՊ

Հարցերի համար կարող եք կապ
հաստատել մրցույթի համակարգողի
հետ՝ **alt33@urbanlab.am** հասցեով,
հայերեն և անգլերեն:

Մրցութային փաթեթի տրամադրման
օրվանից գործելու է առցանց բաց
քննարկման հարթակ՝ հետևյալ հասցեով՝
chat.alt33.info

CONTACT

For all inquiries please contact
competition coordinator both in
Armenian and in English by:
alt33@urbanlab.am

An open online discussion platform will
be available by the following address:
chat.alt33.info

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ \ USEFUL LINKS

Սոցիալական մեդիա \ Social Media

Երևանի ժառանգության պաշտպանության կոմիտե |
Committee for the Protection of Yerevan's Heritage
[www.facebook.com \ OtherYerevan](http://www.facebook.com/OtherYerevan)

Firdus: The Memory of a Place - Official Facebook Page
<https://www.facebook.com/firdusmemory/>

Հայտարարություններ \ Announcements

We call for immediate halt to construction in Firdusi District:
<https://transparency.am/en/news/view/3087>

Անհապաղ դադարեցնել Ֆիրդուսի թաղամասի կառուցապատումը
<https://transparency.am/hy/news/view/3087>

Statement by NGO's on the need for radical reforms in areas of regional
development and urban planning:
<https://transparency.am/en/news/view/3051>

Տարածքային զարգացման ու քաղաքային պլանավորման
ոլորտներում արմատական բարեփոխումների անհրաժեշտության մասին
<https://transparency.am/hy/news/view/3051>

Հրատարակություններ \ Publications

Firdus: The Memory of a Place — collective monograph ed.
by T. Amiryan, S. Kalantaryan
<http://firdusmemory.com/>

Firdus Memory - Project report & Key ideas. Ed.
by T. Amiryan, S. Kalantaryan
<https://goo-gl.su/6szcb>

The Transformation of Yerevan's Urban Landscape After Independence,
by S. Petrosyan
https://www.academia.edu/29171148/The_Transformation_of_Yerevan_s_Urban_Landscape_After_Independence

Contrivances on Araratian Street: An Ideology or An Urban Public Space,
by S. Petrosyan, N. Topalian
[\[https://www.academia.edu/19954659/Contrivances_on_Araratian_Street_An_Ideology_or_An_Urban_Public_Space\]](https://www.academia.edu/19954659/Contrivances_on_Araratian_Street_An_Ideology_or_An_Urban_Public_Space)

ԱՅԼ ՀՂՈՒՄՆԵՐ \ OTHER LINKS

Amiryan T. Firdus: The memory of the place and the locals (English subtitles) - boon.am 23.07.2019: <http://book.csnlab.net/>

Other Yerevan / Այլ Երևան՝ www.otheryerevan.am

Human rights activist on Firdusi District construction plan:

‘This is a very sad precedent after the revolution’

– Panorama, by Armenian Reporter,

<https://www.reporter.am/human-rights-activist-on-firdusi-district-construction-plan-this-is-a-very-sad-precedent-rafter-the-revolution-panorama>



alt33.info